ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.03.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/59

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Քիմիմպեքս» ՓԲԸ-ի տնօրեն Կ. Ալեքսանյանի (պետական գրանցման վկայականի համար՝ 01Ա015839),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 05.03.2021թ. թիվ 26/26-1/3243-2021 գրությամբ «Քիմիմպեքս» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 02.03.2021թ. թիվ Ե/ՎՈՒ/330-21 գրության հիման վրա 05.03.2021թ. թիվ 26/26-1/3243-2021 գրությամբ նախաձեռնել է «Քիմիմպեքս» ՓԲԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Քիմիմպեքս» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Քիմիմպեքս» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում ենք Ձեզ, որ «Քիմիմպեքս» ՓԲԸ-ն մասնակցել է պարարտանյութերի տվյալ դեպքում ազոտական պարարտանյութի (Ամոնիում Նիտրատ NH4NO3) ձեռքբերման նպատակով հայտարարված ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/13 ծածկագրով մրցույթին, որտեղ ազոտի պարունակությունը 34,4% է և ներկայացրել ենք պիտանելիության ժամկետ ոչ պակաս 6 ամիս, որը համապատասխանում է վերը նշված պարարտանյութի գոստ 2-2013, կոդ ԳՆԳ-31023090: Հետևաբար մենք չէինք կարող շտկում կատարել և ներկայացնել պիտանելիության ժամկետը 24 ամիս, որը չէր համապատասխանի տվյալ պարարտանյութի անձնագրային ցուցանիշին: Մեր կողմից առաջարկվող պարարտանյութը արտադրվում է Ռ.Դ «Եվրոքիմ» Ընկերության կողմից, որի դիստրուբիտոր ենք ՀՀ-ում, 2018թ-ից կնքվել է համապատասխան Պայմանագիր: Հավաստիացնում ենք Ձեզ, որ մենք առաջնորդվել ենք արտադրող գործարանի կողմից տրվող հավաստագրերից: Տեղեկացնում ենք նաև, որ տրվող պարարտանյութը չի կարող ունենալ պիտանելիության ժամկետ ոչ պակաս 24 ամիս՝ ելնելով նրա ֆիզիկոքիմիական հատկանիշներից: Ուստի, խնդրում ենք «Քիմիմպեքս» ՓԲԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ մեր կողմից միտումնավոր չի եղել կատարել շտկումը»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/59 ընթացակարգի շրջանակներում 16.03.2021թ. ժամը 09:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, մասնակցել է նիստին և ներկայացրել վերը շարադրված դիրքորոշումը:

3. <u>«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 02.03.2021թ. թիվ Ե/ՎՈՒ/330-21 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ 2021թ.-ի փետրվարի 22-ին, ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի շենքում ժամը

11:00-ին տեղի է ունեցել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կարիքների համար պարարտանյութերի և թունաքիմիկատների ձեռքբերման «ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/13» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստը:

«Քիմիմպեքս» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ՝ 02203262) կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝ ապրանքի ամբողջական նկարագրի փաստաթղթում, համաձայն՝ Հավելված 1.1-ի, 9-րդ չափաբաժնի մասով ներկայացված բնութագիրը սխալ է և չի բավարարում «ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/13» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին՝ առաջարկվող ապրանքի համար հրավերով սահմանվել է պիտանելիության ժամկետ՝ ոչ պակաս 24 ամսից, սակայն «Քիմիմպեքս» ՓԲԸ-ի կողմից առաջարկվող ապրանքի համար ներկայացվել է պիտանելիության ժամկետ՝ ոչ պակաս 6 ամսից:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ նիստը կասեցվել է մեկ աշխատանքային օրով և 22.02.2021թ-ին համակարգի միջոցով ծանուցմամբ «Քիմիմպեքս» ՓԲԸ-ին առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Քիմիմպեքս» ՓԲԸ-ի կողմից 23.02.2021թ-ին սույն գնման ընթացակարգի հրավերում նշված էլեկտրոնային հասցեին չի ներկայացվել շտկված փաստաթուղթ:

Վերոգրյալով պայմանավորված գնահատող հանձնաժողովը որոշեց, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված պահանջները, «Քիմիմպեքս» ՓԲԸ-ի հայտը 9-րդ չափաբաժնի մասով գնահատել անբավարար և մերժել:

Համաձայն Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջների՝ «Քիմիմպեքս» ՓԲԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում ենք Ձեզ՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ սկսելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/59 ընթացակարգի շրջանակներում 16.03.2021թ. ժամը 09:25-ին հրավիրված հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/59 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/59 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից իր կարիքների համար պարարտանյութերի և թունաքիմիկատների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Քիմիմպեքս» ՓԲԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Ընկերության հայտը գնահատել է անբավարար և մերժել, այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում չեն շտկվել արձանագրված անհամապատասխանությունները:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 05.03.2021թ. թիվ 26/26-1/3243-2021 գրությունը, «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 02.03.2021թ. թիվ Ե/ՎՈՒ/330-21 գրությունը՝ կից փաստաթղթերով, ՍՑ-ՆԳ-2021/59 ընթացակարգի շրջանակներում «Քիմիմպեքս» ՓԲԸ-ի հայտնած դիրքորոշումը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են

գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի

«ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպիսով՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից իր կարիքների համար պարարտանյութերի և թունաքիմիկատների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Քիմիմպեքս» ՓԲԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է հետևյալը. ««Քիմիմպեքս» ՓԲԸ-ի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի փաստաթղթում, համաձայն՝ Հավելված 1.1-ի, 9-րդ չափաբաժնի մասով ներկայացված բնութագիրը սխալ է և չի բավարարում սույն գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ հրավերով սահմանվել է, որ առաջարկվող ապրանքը պետք է ունենա պիտանելիության ժամկետը՝ ոչ պակաս 24 ամսից, սակայն Ընկերության կողմից նշվել է, որ առաջարկվող ապրանքը ունի պիտանելիության ժամկետ՝ ոչ պակաս 6 ամսից»:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, կասեցրել է նիստը մեկ աշխատանքային օրով, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող Armeps համակարգի միջոցով ծանուցել է Ընկերությանը՝ առաջարկելով շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Ընկերության հայտը գնահատել է անբավարար և մերժել, այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում չեն շտկվել արձանագրված անհամապատասխանությունները:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/13» ծածկագրով ընթացակարգի հրավերի՝ պայմանագրի նախագծին կից հավելված N 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 9-րդ չափաբաժնի համաձայն՝ գնման առարկայի «Ազոտական պարարտանյութ»-ի ձեռքբերման համար սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Չ/հ	**Անվանումը**	**Հատկանիշները (տեխնիկական բնութագիր)**
9	Ազոտական	Սպիտակ հատիկավորված մասնիկներով զանգված, մասնիկների մեծությունը

	պարարտանյութ	առնվազն՝ 2մմ, 34% ազոտի պարունակությամբ, փաթեթավորումը 50կգ-անոց պարկերով: Պիտանելիության ժամկետը՝ ***<u>ոչ պակաս 24 ամսից</u>***: Կիրառվում է մշակաբույսերի պարարտացման համար ցանքից առաջ, Պահել չոր տեղերում: Պայթունավտանգ է:

Միաժամանակ արձանագրում եմ, որ «Քիմիմպեքս» ՓԲԸ-ի կողմից հայտով ներկայացվել է Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, հետևյալ տեսքով.

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«Քիմիմպեքս» ՓԲԸ-ն ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/13 ծածկագրով գնանշման հարցման շրջանակում ըստ չափաբաժինների ստորև ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չ/հ	**Ֆիրմային անվանումը**	**տեխնիկական բնութագիր**
9	Ազոտական պարարտանյութ	Սպիտակ հատիկավորված մասնիկներով զանգված, մասնիկների մեծությունը առնվազն՝ 2մմ, 34% ազոտի պարունակությամբ, փաթեթավորումը 50կգ-անոց պարկերով: Պիտանելիության ժամկետը՝ ***<u>ոչ պակաս 6 ամսից</u>***: Կիրառվում է մշակաբույսերի պարարտացման համար ցանքից առաջ, Պահել չոր տեղերում: Պայթունավտանգ է:

Այսպիսով՝ ուսումնասիրելով Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծին կից հավելված N 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 9-րդ չափաբաժնի մասով սահմանված ապրանքի տեխնիկակա բնութագիրը, ինչպես նաև Ընկերության կողմից հայտով ներկայացված Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, արձանագրում եմ, որ ապրանքի համար հրավերով սահմանվել է պիտանելիության ժամկետ՝ ոչ պակաս 24 ամսից, սակայն «Քիմիմպեքս» ՓԲԸ-ի կողմից առաջարկվող ապրանքի համար ներկայացվել է պիտանելիության ժամկետ՝ ոչ պակաս 6 ամսից:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***<u>հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:</u>***

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ ***հայտերի բացման և գնահատման նիստում ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:***

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը, Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվելով անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ, սահմանված ժամկետում չի ներկայացրել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի (հավելված N 1.1) շտկված տարբերակը, որն էլ իր հերթին հանգեցրել է Ընթացակարգին Ընկերության հետագա մասնակցության դադարեցմանը: Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետով հստակ սահմանվում է, որ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված

փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Ինչ վերաբերվում է Ընկերության կողմից սույն գործի շրջանակներում հայտնած դիրքորոշմանը, մասնավորապես՝ վերջինս հայտնել է հետևյալը. «*Ընկերությունը ներկայացրել է պիտանելիության ժամկետ ոչ պակաս 6 ամիս, որը համապատասխանում է պարարտանյութի գոստ 2-2013, կոդ ԳՆԳ-31023090-ին: Հետևաբար մենք չէինք կարող շտկում կատարել և ներկայացնել պիտանելիության ժամկետը 24 ամիս, որը չէր համապատասխանի տվյալ պարարտանյութի անձնագրային ցուցանիշին: Տեղեկացնում ենք նաև, որ տրվող պարարտանյութը չի կարող ունենալ պիտանելիության ժամկետ ոչ պակաս 24 ամիս՝ ելնելով նրա ֆիզիկոքիմիական հատկանիշներից», ապա* սույն մասով հարկ եմ համարում արձանագրել, որ Ընկերության կողմից փաստացի վիճարկվում է հրավերով սահմանված գնման առարկայի բնութագիրը, մինչդեռ՝ Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը, սակայն արձանագրում եմ, որ Ընկերության կողմից մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետն Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի վերաբերյալ բողոք չի ներկայացվել, ուստի «ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/13» ծածկագրով ընթացակարգի հայտերը բացվելուց հետո Ընկերության կողմից դիրքորոշմամբ բարձրացված խնդիրը, որով ըստ էության վիճարկվում է գնման առարկայի բնութագիրը, չի կարող քննության առարկա հանդիսանալ սույն գործի շրջանակներում:

Միաժամանակ, անդրադառնալով Ընկերության այն դիտարկմանը, որ պարարտանյութը չի կարող ունենալ պիտանելիության ժամկետ ոչ պակաս 24 ամիս՝ ելնելով նրա ֆիզիկոքիմիական հատկանիշներից, ապա սույն մասով հարկ եմ համարում արձանագրել, որ Ընթացակարգի 9-րդ չափաբաժնի մասով հայտ է ներկայացրել նաև Ա/Ձ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսին, ով Հավելված 1.1-ով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով ապրանքի համար առաջարկել է պիտանելիության ժամկետ՝ ոչ պակաս 24 ամսից:

Այսպիսով՝ գործով առկա նյութերը համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ, գտնում եմ, որ «Քիմիմպեքս» ՓԲԸ-ն «ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-21/13» ծածկագրով ընթացակարգի

շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 05.03.2021թ. թիվ 26/26-1/3243-2021 գրությամբ «Քիմիմպեքս» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Քիմիմպեքս» ՓԲԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**